

ՊԱՇՏՈՆԱԿԱՆՔ



Երեքշաբթի, 2 Ապրիլ. Առաւօտեան ժամը 9:45-ին, Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը նախագահութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի, Զատկական շնորհաւորութիւններու գնաց Ֆրանչիսկեան Քիւսթոտ՝ Հոգշ. Տ. Ֆրանչեսկո Փաթոնի եւ Միաբանութեան: Ապա ժամը 10:30-ին Լատինաց Ամենապատիւ Տ. Փիեր-պաթիսթա Արքեպիսկոպոս Փիցաբալա Պատրիարք Սրբազան Հօր եւ Միաբանութեան:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 5-ին, Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս Նիկոլաս Գասիանիդէսի կողմէ տրուած հրաժեշտի ընդունելութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Հրաժեշտի ընդունելութիւնը կազմակերպւած էր ի պատիւ Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս Տիար Նիկոլաս Գասիանիդէսի կրօնական գիծով խորհրդական Հայր Լուքի, որուն պաշտօնավարման ժամանակը լրացած էր եւ պիտի մեկնէր քաղաքէս:

Ուրբաթ, 5 Ուրբաթ. Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անգլիկան եկեղեցւոյ եպիսկոպոս՝ Գերաշնորհ Տ. Հուսամ Նաում այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան՝ յայտնելու իր զօրակցութիւնը օրեր առաջ Իսրայէլի ոստիկանութեան կողմէ ապօրինաբար Կովերու պարտէզէն հայ հոգեւորականներուն եւ տեղացի հայերուն տեղահանելու, վտարելու փորձի առիթով:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեան եւ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Ուրբաթ, 12 Ապրիլ. Իսրայէլի մէջ Վրաստանի նորանշանակ դեսպան՝ Տիար Զաքա Կանդելակի այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Նորին Ամենապատուութիւն Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հանդիպմանը ներկայ էին նաեւ Սուրբ Աթո-

ռոյս Աւագ Թարգման՝ Տ. Վազգէն Վարդապետ Ալէքեան եւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Հինգշաբթի, 18 Ապրիլ. Երուսաղէմի «Waldorf Astoria» հիւրանոցին մէջ տեղի ունեցաւ Մոսկուայ-Երուսաղէմ «Իմ խաղաղութիւնը կու տամ ձեզի» խորագիրով միջկրօնական համաժողով:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ եւ խօսք առաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Երեքշաբթի, 7 Մայիս. Առաւօտեան ժամը 11:00-ին, մեր Տիրոջ՝ Յիսուս Քրիստոսի հրաշափառ Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը, գլխաւորութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի, շնորհաւորութեան գնաց Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքին եւ Միաբանութեան:

Չորեքշաբթի, 8 Մայիս. Սուրբ Յարութեան տօնին առիթով, առաւօտեան ժամը 09:30-էն սկըսեալ, յաջորդաբար Հայոց Պատրիարքարան շնորհաւորութեան եկան Յունաց Ամենապատիւ Տ. Թէոֆիլոս III Պատրիարքն իր միաբաններով:

Ժամը 10:15-ին Ֆրանչիսկեան փոխ-Քիւսթոտ Հոգեշնորհ Տ. Իպրահիմ Ֆալտաս Ֆրանչիսկեան միաբաններով:

Իսկ ժամը 11:00-ին՝ Լատինաց Պատրիարքական Փոխանորդն իր միաբաններով, եւ Կաթոլիկ, Բողոքական, Ասորի, Ղպտի եւ Հապէշ Ուղղափառ Եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ:

Նոյն օրը, Երեկոյեան ժամը 16:30-ին, Սուրբ Յարութեան տօնին առիթով Սրբոց Յակոբեանց Միաբանութիւնը՝ հանդիսապետութեամբ Գերաշնորհ Տ. Կորիւն Եպիսկոպոս Բաղդասարեանի, Զատկական շնորհաւորութեան գնաց Սուրբ Երկրին մէջ Հայերու հետեւակ՝ Ասորի, Ղպտի եւ Հապէշ եկեղեցիներու եպիսկոպոսներուն եւ միաբանութեանց:

Ուրբաթ, 31 Մայիս. Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս Տիար Նիկոլաս Գասիանիդէս ի պատիւ Սուրբ Երկրի երեք քրիստո-

ներառյալ պատրիարքներու եւ հիւպատոսներու կազմակերպած էր սիրոյ ճաշկերոյթ:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հայրը՝ ընկերակցութեամբ Պատրիարքութեան Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի:

Երկուշաբթի, 3 Յունիս.- «Անկլիքան Հաղորդութեան» գլխավոր քարտուղար՝ Տ. Էնթոնի Եպիսկոպոս Պոկկո եւ «Cuddeston» աստուածաբանական քոլէճի տնօրէն՝ Տ. Համֆրի Եպիսկոպոս Սաութերն առաջնորդութեամբ Երուսաղէմի եւ Մերձաւոր Արեւելքի Անկլիքան եկեղեցւոյ եպիսկոպոս՝ Տ. Հոսամ Արքեպիսկոպոս Նաումի քաղաքավարական այցելութիւն կատարեցին Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցան Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 6 Յունիս.- Առաւօտեան ժամը 10-ին, Սուրբ Երկրի Հոգեւոր պետերու եւ եկեղեցիներու առաջնորդներու խորհուրդը Երուսաղէմի Յունաց Պատրիարքարանին մէջ ընդունեց Հարաւաֆրիկեան եկեղեցիներու խորհուրդի (SACC) պատուիրակութեանը:

Պատուիրակութեան կազմին մէջ էին Հարաւաֆրիկեան եկեղեցիներու խորհուրդի նախագահ, Քէյպթաունի Անկլիքան Արքեպիսկոպոս եւ Հարաւային Աֆրիկայի առաջնորդ՝ Թապօ Արքեպիսկոպոս Մակգոպա, Հարաւային Կաթոլիկ եպիսկոպոսներու համաժողովի նախագահ՝ Սիթեմպէլ Եպիսկոպոս Սիպուկա, եւ Հարաւաֆրիկեան եկեղեցիներու խորհուրդի գլխավոր քարտուղար՝ Մալուսի Եպիսկոպոս Մպումբլանա:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութիւնը ներկայացուց՝ Դիւանապետ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Չորեքշաբթի, 12 Յունիս.- Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ Գերաշնորհ Տ. Թէոդորոս Եպիսկոպոս Զաքարեան՝ ընկերակցութեամբ Բեթղէհէմի Սուրբ Ծննդեան տաճարի տեսուչ՝ Տ. Ասպետ Ծ. Վարդապետ Պալեանի, Սուրբ Աթոռոյս Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեանի եւ Պաղեստինի մէջ Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան փաստաբան՝ Տիար Ռաետ Ամայեայի շնորհաւորութեան գնաց Պաղեստինի նորանշանակ Արտաքին գործոց նախարարուհի եւ արտագաղթի

հարցերով պատասխանատու, հայազգի Վարսէն Աղաբեկեանին:

Շնորհաւորական այցի ընթացքին պատուիրակութիւնը Տիկին Աղաբեկեանին նուիրեց Երուսաղէմի մէջ յայտնի Հայկական յախճապակիի արուեստի նմոշներէն գեղեցիկ յուշանուէր-նուռ մը:

Երկուշաբթի, 24 Յունիս.- Ժամը 10:30-ին, Իսրայէլի մէջ ԱՄՆ-ի դեսպանատան «Պաղեստինեան գործերու վարչութեան» ղեկավար՝ Տիար Ճորճ Նոլիր պաշտօնավարութեան շրջանն աւարտելուն առիթով քաղաքէս մեկնելէն առաջ այցելեց Երուսաղէմի Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Հինգշաբթի, 27 Յունիս.- Երուսաղէմի Նոթր Ծամ պանդոկին մէջ, ի պատիւ Իսրայէլի մէջ Ամերիկայի դեսպանատան «Պաղեստինեան գործերու վարչութեան» ղեկավար՝ Տիար Ճորճ Նոլի տրուած հրաժեշտի ընդունելութեան Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

Երեքշաբթի, 9 Յուլիս.- Առաւօտեան ժամը 10-ին, Երուսաղէմի մէջ Թուրքիոյ նորանշանակ Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Իսմայիլ Զոպանօղլու այցելեց Հայոց Պատրիարքարան եւ հանդիպում ունեցաւ Ամենապատիւ Տ. Նուրհան Արքեպիսկոպոս Մանուկեան Պատրիարք Սրբազան Հօր հետ:

Շաբաթ, 13 Յուլիս.- Ժամը 17:00-ին, Ֆրանսայի ազգային օրուան առիթով Երուսաղէմի՝ Հին քաղաքի Կաթոլիկներու Սուրբ Աննա եկեղեցւոյ մէջ մատուցուեցաւ Սուրբ Պատարագ: Յաւարտ Սուրբ Պատարագի տեղի ունեցաւ ընդունելութիւն, որուն Երուսաղէմի մէջ Ֆրանսայի Ընդհանուր Հիւպատոս՝ Տիար Նիկոլաս Գասիանիդէսի հրաւերով Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցան Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան եւ Դիւանի գլխավոր քարտուղար՝ Գրիգոր Սարկաւագ Թաքուշեան:

Ուրբաթ, 19 Յուլիս.- Առաւօտեան ժամը 8:30-ին, Ամերիկայէն Սենատոր Քրիս Վան Հօլըն այցելեց Երուսաղէմի Հոգեւոր Պետերուն Յունաց Պատրիարքարանի մէջ՝ լսելու Սուրբ Երկրի Քրիստոնէական համայնքներու առկայ խնդիրներու մասին:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան կողմէ ներկայ գտնուեցաւ Դիւանապետ՝ Տ. Աղան Վարդապետ Գոգչեան:

ՅՕԴՈՒԱԾԱԳԻՐՆԵՐՈՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԵԱՆ

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական հանդէսը հիմնուած է 1866-ին, պաշտօնաթերթն է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան եւ լոյս կ'ընծայուի Սրբոց Յակոբեանց Տպարանէն:

«Սիոն» կրօնական, գրական, բանասիրական նիւթերէ գատ, կ'ընդգրկէ նաեւ պատմական, եկեղեցական, լեզուական եւ հայ արուեստի վերաբերեալ ուսումնասիրութիւններ եւ ալ բնոյթով նիւթեր:

Յօդուածներու հիմնական լեզուն Հայերէնն է, կ'ընդունուին նաեւ Անգլերէնով յօդուածներ, նախընտրաբար 8-15 համակարգչային շարուածքով լման էջ՝ Word միջավայրին մէջ, երկու կողմերէն հաւասարեցուած, առանց տողադարձերու, ծաւալը՝ A4 ֆորմատի, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 12 pt, տողերու հեռաւորութիւնը՝ 1.15 pt:

Յղումները կը տրուին տողատակը՝ աճման կարգով, տառատեսակը՝ Arian Grqi, տառաչափը՝ 10 pt: Հայերէն յօդուածները «Սիոն»-ի մէջ կը հրատարակուին դասական հայերէն ուղղագրութեամբ: «Սիոն»-ին յանձնուած յօդուածները պէտք է ըլլան անտիպ:

Յօդուածին սկիզբը կը դրուի հեղինակի անունը, մականունը (գլխագիրներով), գիտական աստիճանն ու կոչումը, աշխատանքի վայրը, պաշտօնը եւ ելեքտրոնային փոստի անուանումը:

Յօդուածագիրներու արտայայտած գաղափարներն ու կարծիքները պայման չէ որ համընկին «Սիոն»-ի խմբագրութեան տեսակէտին:

Մեր սրտագին բաղձանքն է որ «Սիոն» մուտք գործէ բոլոր հայ տուներէ ներս. Վստահ ենք թէ ամէն ընթերցող պիտի գտնէ անոր էջերուն մէջ գրութիւններ՝ որոնք համապատասխան ըլլան իր ճաշակին եւ նախասիրութեան:

Յօդուածներ եւ ալ թղթակցութիւններ, ուսումնասիրութիւններ պէտք է ուղարկւին «Սիոն»-ի հետեւեալ հասցէով.

E-mail: sionjournal@yahoo.com





Մեծ Պահոց ե. Կիրակի՝ Դատաւորի Կիրակի, Ս. Պատարագ Ս. Գերեզմանին վրայ
Պատարագիչ՝ Տ. Կորին Եպս. Բաղդասարեան



Սաղիմահայ Միացեալ Ֆանձնախումբը Հայոց ցեղասպանութեան յուշարձանին առջեւ՝
Հայոց ցեղասպանութեան 109-րդ տարելիցին առիթով



Ծաղկազարդի «Անդաստան» ի Ս. Յարութին
Հանդիսապետ՝ Տ. Թեղորոս եպս. Զափարեան



Ծաղկազարդի տօնէն վերջ թափօրով վերադարձ դէպի Մայրավան



Ծաղկազարդի Ս. Պատարագէն եւ Միաբանութիւնը եւ Ժառանգաւոր սաները ոստիկանատան
առջեւէն քափօրով եւ շարականի երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան



Աագ Հինգշաբթի: Ունկլոյ
Հանդիսապետ՝ Լուսարարապետ Տ. Սեւան Արք. Դարիպեան



Աւագ Ուրբաթ: Կարգ Թաղման ի Ս. Յակոբ



Աւագ Ուրբաթ: Կարգ Թաղման ի Ս. Յակոբ
Հանդիսապետ՝ Տ. Սեան Արք. Ղարիպեան



Լուսահան՝ Տ. Ասպետ Մ. Վրդ. Պալեան
Քրիստոսի Յարութեան Լոյսը Հայոց Թաղի սկիզբէն թափօրով կը բերէ Մայրավանք



Յարութիւն Տեառն
Պատարագիչ՝ Տ. Թէոդորոս Եպս. Զափաւեան



Յարութին տեառն
ժառանգաւորաց երգչախումբը Քրիստոսի Ա. Գերեզմանին առջեւ



Մեծահանդէս «Անդաստան» Մեծ բակին մէջ



Բ. օր Զատիկի, Ուխտաւորաց Պատարագ
 Պատարագիչ՝ Սրբոց Յակոբեանց միաբաններէն Արեւմտեան Եւրոպիոյ Հայրապետական
 Պատուիրակ Տ. Խաժակ Արք. Պարսամեան



Բ. օր Զատիկի, յաւարտ Ուխտաւորաց Պատարագի կատարուեցաւ մատուցման քափօր ի Ս. Յակոբ
 Թափօրապետ՝ Լուսարարապետ Տ. Սեան Արք. Ղարիպեան



Բ. օր Զատիկի, Ուխտատուաց Պատարագէն վերջ Միաբանութիւնը եւ Ուխտատու ժողովուրդը թափօրով եւ շարականներու երգեցողութեամբ բարձրացան Պատրիարքարան, ուր Պատրիարք Սրբազան Հայրը նշխար բաժնեց ներկաներուն



Սրբոց Յակոբեանց Միաբանութեան
Զատական շնորհատուական այցելութիւնը Ֆրանսիական եղբայրութեան



Սրբոց Յակոբեանց Միաբանութեան
Հատկական շնորհատրական այցելութիւնը Լատին Պատրիարքին եւ Միաբանութեան



Ս. Յարութեան տօնին առիթով Հայոց Պատրիարքարան շնորհատրութեան եկան Յունաց
Ամենապատիւ Տ. Թէոփիլոս III Պատրիարքն իր միաբաններով



Ս. Յարութեան տօնին առիթով Հայոց Պատրիարքարան շնորհատրութեան եկան Լատինաց Պատրիարքական Փոխանորդն իր միաբաններով, եւ Կաթողիկէ, Բողոքական, Ասորի, Ղպտի եւ Հապէշ Ուղղափառ եկեղեցիներու հոգեւոր պետեր եւ ներկայացուցիչներ



«Անդաստան» Համբարձման սրբավայրին առջեւ
Հանդիսապէտ՝ Տ. Թէոդորոս եպս. Զաքարեան



Ս. Թարգմանչաց Երկրորդական վարժարանի 2023-2024 տարւոյ
շրջանաւարտներու եւ ուսուցիչներու խմբանկար



Ընծայարանի 2023-2024 տարւոյ շրջանաւարտները
Լուսարարապետ Սրբազան Հօր, տեսչի եւ փոխ-տեսչի հետ կը կտրեն շրջանաւարտից հանդէսի
կարկանդակը